

–Վասնզի այդ երկրին մէջ, ուր գետինը կշարժուի՝ մարդերը պարտաւոր են չշարժուիլ:

Թողունք ա՛լ այս շարժման խնդիրն եւ դառնանք կղզւոյն: Այս կղզւոյն վրայ կատարեալ ծանօթութիւն մը տալու համար՝ կյիշեմ քեզ բժշկի մը պատասխանը, զոր տուած է շոգենաւի մէջ իւր մէկ բարեկամին, որ Գընալը կ'երթար: «Կը զարմանամ թէ Գընալըին ինչո՞ւ այսչափ կարեւորութիւն կը տրուի, ըսաւ բժիշկը. հոն ուրիշ բան չկայ՝ եթէ ոչ *չընար* մը եւ Ասապա էֆէնտի մը»: Ասապա էֆէնտին, որ ազգային երեսփոխան ալ է՝ կղզւոյն պետն է: Ով որ ցաւ կամ դատ ունի՝ անոր կղիմէ, որ խրատելով եւ հաշտեցունելով յետ կը դարձունէ զանոնք: Կղզւոյն մէջ ամենէն կը յարգուի իբրեւ երիցագոյն բնակիչ եւ հիւրասէր մարդ մը, որ Թաղական Խորհրդոյ ալ անդամ է:

–Ասապա էֆէնտիին ալ գետինները կը քալե՞ն:

–Չէ՛, անոր գետինները ծոյլ են, բնաւ չեն շարժիր եւ կը մնան ուր որ են:

–Կիրակի առաւօտները *չընար*ին տակը կ'երթան կղզւոյն բնակիչները, որք ձմեռը քառասուն տունէ եւ ամառը վաթսունօթօթանասուն տունէ կը բաղկանան: Հոս ձմեռը երեսունի չափ տուն կայ հայո: Անցեալները կղզեցւոյն եւ թաղականին մէջ վէճ մը ծագեցաւ, որ հաշտութեամբ վերջացաւ: Երեսուն աշակերտի համար երկու վարժարան կայ, մին թաղային եւ միւսը մասնաւոր: Թաղային վարժարանը կկառավարուի բարի քահանայէ մը, որ եկեղեցւոյն ալ քահանան է, եւ աշխատող դասատուէ մը, որ եկեղեցւոյն ձայնաւորն է: Այս վարժարանին մէջ Եղիշէն թարգմանող աշակերտներ կան, ինչպէս նաեւ աւետարանը հասկցող աշակերտուհիներ: Մասնաւոր վարժարանին ալ դասատու տնօրէններն են երկու պարկեշտ եղբայրներ, որք կմրցին թաղային վարժարանին հետ: Երեսուն աշակերտի համար երկո՞ւ վարժարան... յառաջադիմութեան նշան չէ՞ այս...

Կղզւոյն բնակիչներն եկեղեցի չեն երթար. անոնց միայն մտմտութիւն է, թէ ի՛նչպէս կարելի է տասը բարա արժէք ունեցող մէկ բանը քառասուն բարայի ծախել: Ամառուան եղանակն անցունելու համար կղզի գնացողներուն ալ միայն մտմտութիւն է, թէ ի՛նչպէս ընեն, որ կղզւոյն բնակիչներուն հետ առեւտուր չընեն: Ասոր համար է որ անոնք իրենց միսը, եղը, պանիրը, հացն եւ ջուրը Պօլիսէն կը տանին իրենց հետը: